ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1959 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ ՀՍՍՌ ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց Վ. Դարյանի աշխատությունը, որը նվիրված է Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման պատմությանը և նրա հեռանկարներին[1]։

Աշխատության առաջին գլխում հեղինակը անդրադառնում է Հայաստանում տեքստիլ արդյունաբերության ծագման ու զարգացման հարցերին։ Այստեղ նա նշում է, որ տեքստիլ արդյունաբերությունը որպես ժամանակակից խոշոր արդյունաբերություն ծագում է միայն սովետական կարգերի հաստատումից հետո։

Այնուհետև հեղինակը անցնում է տեքստիլ արդյունաբերության առանձին ճյուղերի ուսումնասիրությանը՝ սկսելով բամբակազտիչ արդյունաբերությունից։

Սովետական կարգերի օրոք ռեսպուբլիկայում կազմակերպվում են մի շարք բամբակազտիչ ձեռնարկություններ։ 1924 թ. շահագործման է հանձնվում Երևանի առաջին բամբակազտիչ գործարանը, 1925 թ. Հոկտեմբերյանի բամբակազտիչ գործարանը և այլն։ Հետագայում, աշխատանքի արտադրողականության բարձրացման հետևանքով, ինչպես ցույց է տալիս հեղինակը, բամբակազտիչ ձեռնարկությունների մի մասը լիկվիդացվում է. Հոկտեմբերյանի ու Արտաշատի գործարանները արդեն լիովին բավարարում էին ռեսպուբլիկայի պահանջը։

Պետք է նշել, որ հեղինակը չի ընդգրկել բամբակազտիչ արդյունաբերության զարգացման բոլոր հարցերը, մասնավորապես բանվորների թվական կազմի, արտադրական կարողությունների աճի ու նրանց օգտագործման, աշխատանքի արտադրողականության, աշխատավարձի, արտադրանքի ինքնարժեքի հետ կապված հարցերը և այլն։ Այդ հարցերի լուսաբանումը զգալիորեն կբարձացներ գրախոսվող աշխատության արժեքը և կոնկրետ օգնություն կլիներ արդյունաբերության այդ ճյուղի աշխատողներին։

Հաջորդ գլխում հեղինակը կանգ է առնում Հայաստանի բամբակագործվածքային արդյունաբերության զարգացման հարցերի վրա։ Վերլուծելով տեքստիլ արդյունաբերության այդ ճյուղի տնտեսական գործունեության արդյունքները, հեղինակը ցույց է տալիս, մի կողմից՝ այն դրականը, որ ձեռք է բերվել նոր տեխնիկայի և առաջավոր տեխնոլոգիայի արմատավորման ասպարեզում, իսկ մյուս կողմից՝ այն թերությունները, որ տեղ են գտել այդ ասպարեզում։ Ցավալի է, որ հեղինակը չի բերում թվական տվյալներ մեքենաների ու սարքա-

---

[1] Վ. Ա. Դարյան, Հայկական ՍՍՌ տեքստիլ արդյունաբերությունը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հրատարակչություն, Երևան, 1958, 139 էջ։

վորումների օգտագործման մասին, չի վերլուծում դրանց անբավարար օգտագործման ու պարապուրդների պատճառները։

Աշխատության մյուս գլուխը նվիրված է ռեսպուբլիկայի բրգի արդյունաբերության։ Այդ ճյուղի ուսումնասիրությունը նա սկսում է գորգագործությունից։ Հայաստանը զարգացած գորգագործություն է ունեցել դեռևս շատ հարյուրամյակներ սրանից առաջ։ Սովետական կարգերի հաստատումից հետո գորգագործությունը ապրում է իր հետագա զարգացումը։ Ռեսպուբլիկայում մեծ չափերով աճում է գորգերի արտադրությունը, արմատավորվում է նոր, ավելի բարձր որակի գորգերի արտադրությունը։

Անհրաժեշտ է նշել, որ հեղինակը աչքաթող է արել գորգագործության ասպարեզում տեղ գտած թերությունները։ Ռեսպուբլիկայի գորգագործությունը մինչև այժմ հենվում է ձեռքի աշխատանքի վրա։ Մինչդեռ Սովետական Միության մի շարք քաղաքներում վաղուց արդեն կազմակերպված է գորգերի գործարանային արտադրություն։ Մեր կարծիքով, հեղինակը պետք է նշեր ռեսպուբլիկայում գորգերի գործարանային արտադրության կազմակերպման անհրաժեշտությունը, որ մեծ չափերով բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և իջեցնում արտադրանքի ինքնարժեքը։

Աշխատության հաջորդ գլխում Վ. Դարյանը քննարկում է մետաքսի արդյունաբերության զարգացման հարցերը։ Սովետական կառավարության հոգատարության շնորհիվ, տարեցտարի ընդարձակվում է մետաքսի արդյունաբերության բազան։ Դա հնարավորություն տվեց արդեն 1957 թ. մետաքսե կտորների արտադրությունը, 1932 թ. համեմատությամբ, ավելացնել 78 անգամ։ Միաժամանակ ընդլայնվում է թողարկվող արտադրանքի ասորտիմենտը։ Նշված հաջողությունները հետևանք են նոր տեխնիկայի և առաջավոր տեխնոլոգիական պրոցեսների արմատավորման։ Այդ բաժնում հեղինակը անբավարար ուշադրություն է դարձնում ձեռնարկությունների արտադրական գործունեության հիմնական ցուցանիշների վրա։

Գրախոսվող աշխատության մեջ առանձին գլուխ է նվիրված տրիկոտաժի արդյունաբերության զարգացման հարցերին։ Այդ ճյուղը սկզբում հանդես է գալիս տնայնագործական ձևով և զարգանալով վեր է ածվում ժամանակակից խոշոր արդյունաբերության։ Վերջին տարիներին մի քանի անգամ ավելացավ տրիկոտաժե ապրանքների արտադրությունը և ընդլայնվեց նրանց ասորտիմենտը։ Ներկայումս ռեսպուբլիկայում թողարկվում են մի քանի տասնյակ տեսակի տրիկոտաժե ապրանքներ։ Արդյունաբերության այդ ճյուղերում գնալով ավելի լայն կիրառում են գտնում արհեստական ու սինթետիկ թելերը։

Տրիկոտաժի արդյունաբերության զարգացման ասպարեզում դեռևս գոյություն ունեն լուրջ թերություններ, որոնց մասին աշխատության մեջ ոչինչ չի ասվում։ Ամենից առաջ պետք է նշել մի շարք տրիկոտաժե ապրանքների ցածր որակը։ Այսպես՝ հայտնի է, որ ռեսպուբլիկայում թողարկվող՝ տղամարդու դուլպաները, կանանց կապրոնե դուլպաները և այլն իրենց որակով դեռևս ցածր են Մոսկվայի և Լենինգրադի ձեռնարկությունների արտադրանքից։ Մեր կարծիքով, հեղինակը պետք է ցույց տար այդ թերությունները և նշեր արտադրանքի որակի բարձրացման ուղիները։

Հայաստանի տեքստիլ արդյունաբերությունը իր հուժկու վերելքը կապրի յոթնամյակի տարիներին։ Այդ հարցին է նվիրված գրախոսվող աշխատության վերջին գլուխը։ Ելնելով Կոմունիստական պարտիայի ու Սովետական կառա-

վարության որոշումներից, հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում սինթետիկ ու արհեստական թելերից պատրաստվող ապրանքների արտադրության ավելացման հարցերի վրա, որ պետք է համարել աշխատության դրական կողմերից մեկը։

Որպես ընդհանուր թերություն անհրաժեշտ է նշել այն, որ գրքում ցույց չի տրված տեքստիլ արդյունաբերության առանձին ճյուղերի տեղը նրա համախառն արտադրանքի մեջ, նրանց փոխհարաբերությունները զարգացման տարբեր ժամանակաշրջաններում։ Մինչդեռ դա հետաքրքիր կլիներ ընթերցողի համար։

Այնուհետև աշխատության մեջ բաց է թողնված տեքստիլ արդյունաբերության պետական ու կոոպերատիվ ձեռնարկությունների փոխհարաբերության հարցը։ Լավ կլիներ, եթե հեղինակը դներ պետական ու կոոպերատիվ արդյունաբերական ձեռնարկությունների մասնագիտացման հարցը և տար իր կարծիքը այդ մասին։

Նշված թերություններով հանդերձ «Հայկական ՍՍՌ տեքստիլ արդյունաբերությունը» աշխատության լույս ընծայումը դրական քայլ է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության պատմությանը նվիրված ամփոփ աշխատություն ստեղծելու ուղղությամբ։

Վ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ